

616.95

12-15

30 JUL 2010

610
126-24

616.95
715-47

62

ՀՐԱՏ. ԲԺ. Ս. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ

ԴԱԲԱՂ

ԿԱՄ

ԿՃՂԱԿԻ ԵՒ ԴՆՁԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

(Նկարներով)

Կազմեց Դ. ՂԱԶԱՐԵԱՆ



Ս.-ՊԵՏԵՐԱՌԻՐԳ.
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ», ԼԵՇՏՈՒԿՈՎ, ՓՈՂ. 4
1908

25 JUL 06
25 SEP 2013

7797

Դարադ կոչուածը մի խիստ վարակիչ հիւան-
դութիւն է, որ համարեա բոլորովին նման ծեւրով
յաճախ պատահում է որոնող անասունների և խո-
ղերի մէջ, իսկ կաթի, լորձուքի, կզկզանքի միջո-
ցով անցնում է նաև ծիւրերին, թռչուններին և մար-
դուն։ Ձին սովորաբար աւելի քիչ ենթակայ է այս
հիւանդութեանը։ Մեծ եղջիւրաւոր անասունները
դարադով հիւանդանում են երբեմն բերանից, եր-
բեմն կնդակներից, երբեմն էլ երկուսից միասին։
Ոչխարների և խոզերի կնդակների արանքներումն
են միայն վէրքեր դուրս գալիս։ Երբեմն այս հի-
ւանդութիւնը երևան է գալիս նաև մի քանի վայ-
րենի կենդանիների մէջ։

Այս վարակիչ հիւանդութիւնը յաճախ մեծա-
մեծ վնասներ է պատճառում անասնապաճառներին
և երկրադործներին։ Երբեմն մի քանի նահանգների,
նոյն իսկ պետութիւնների համարեա բոլոր բնա-
նի անասունները միաժամանակ բռնում են այս
հիւանդութեամբ և զգալի հարուած հասնում
զիւղատնտեսութեան, երկրի տնտեսական առաջա-
դիմութեան։ Ահա այս պատճառով սրա դէմ կրո-

ւելու միջոցները հետաքրքիր են շատ շատերի համար:

Այս հիւանդութեան վարակիչ նիւթը կամ թոչնը թուշող տեսակիցն է և մեծ մասամբ օդի մէջ է գտնուում, այս պատճառով պատկանում է շրջիկ կամ թափառական վարակիչ հիւանդութիւնների կարգին, որովհետեւ մի քանի տարի անցնենք լուց յետոյ կրկին երեւան է դալիս այս կամ այն տեղում՝ անցնելով միշտ արեւելքից դէպ արեւմուտք՝ մանաւանդ շոգ ամառները: Բայց դա ընդհանուր կանոն չպէտք է համարել, որովհետեւ այդ տարափոխիկ հիւանդութիւնը, մանաւանդ ներտարափոխիկ հիւանդութիւնը, մայտնուում, ոչ միայն ամառը, այլ երբեմն և ձմեռը, աշնանը և տեւելով անընդհատ ամբողջ ամիսներ, մինչև իսկ տարիներ, անընդհատ ամբողջ ամիսներ, մինչև իսկ տարիներ, անընդհատ ամբողջ ամիսներ է դառնում անասունների մի տեղից մի այլ տեղ փոխադրելուն:

Դարադի հայրենիքը համարւում է Ասիան, որտեղից հիւանդութիւնը մորթելու համար տարւող անասունների միջոցով պարբերաբար անցնում է դէպ արեւմուտք՝ Եւրոպա:

Դարադի վարակիչ նիւթի իսկական էութիւնը մինչև այժմ դեռ չէ ուսումնասիրուած, միայն յայտնի է, որ թուշող բնաւորութիւն ունի և առողջ կենդանիները կարող են վարակուել հիւանդներից օդի միջոցով 330 ոտնաչափ տարածութեան վրայ այն դէպքում, եթէ նրանք քամուղղութեան վրայ են գտնուում:

Վարակիչ նիւթը գտնուում է առաւելապէս



վերքերի թարախի, լոբձունքի, նոյնպէս և արեւան մէջ: Այլև գտնուում է կաթի մէջ, որի միջոցով կարող է մօրից անցնել կաթնակերներին, նմանապէս և մարդկանց, որոնք վարակուում են կթելիս և հիւանդ կենդանիների հում կաթը գործածելիս:

Հաուբների ասելով 1839 թ. դարապը տարածուած է եղել ամբողջ Եւրոպայում, մինչև իսկ ամենայն հաղորդակցութիւնից դուրս եղած երկրներում՝ լեռներում, անտառներում. նոյն իսկ ծովով անջատուած Անգլիայում երեւացել է այդ հիւանդութիւնը, չնայելով որ այնտեղ այդ ժամանակ խիստ կերպով արգելուած էր դրսից ամենայն տեւակ անասունների ներմուծութիւնը: Այս բանը թշուառ ունենալով Հաուբները ենթադրում է, որ այսպէս միաժամանակ ամենուրեք երեւալու զատնառը այն է, որ նորա վարակիչ նիւթը — «միադմր» ամենայն տեղ տարածուած է, որը նախ և առաջ հիւանդացնում է այդ հիւանդութեանը շրամադիր կենդանիներին՝ մեծ եղջիւրաւոր անասուններին, ոչխարներին, այծերին, խոզերին և ապա վարակման միջոցով անցնում է մինչև իսկ ձիերին, թռչուններին և մարդկանց: Երբեմն աւելի վնասւում է միայն բերանի խողովը, այլ դէպքերուց լճղակները. երբեմն այս հիւանդութեամբ բռնուում են մեծ եղջիւրաւոր անասունները, այլ դէպքերում՝ ոչխարները, այծերը և խոզերը, իսկ երբեմն միաժամանակ բոլորը միասին:

Հիւանդութեան գաղտնի շրջանը, այսինքն այն շրջանը, որ տեւում է վարակուելու րօպէից

մինչև հիւանդութեան յայտնուելը, միշտ միակերպ չէ. 24 ժամից սկսած մինչև 12 օր է տևում. միջին հաշուով բնական եղանակով վարակուած դէպքում 3—6 օր, իսկ արհեստական եղանակով վարակուելիս, այսինքն պատուաստելիս՝ 36—48 ժամ է տևում: Այս հիւանդութեան վարակիչ նիւթի դիմացկանութիւնը բաւական աչքի է ընկնում և երբեմն տևում է մինչև 3 ամիս, նոյն իսկ աւելի: Այսպէս օրինակ, մէկը պատմում է, որ վարակուած տեղի աղբը դաշտ կրող աշխատուոր եղները, չնայելով որ հիւանդութիւնը դադարելուց 4 շաբաթ էր արդէն անցել, հիւանդացել են դաբաղով: Մի ուրիշը պատմում է, որ երեք ամիս առաջ հիւանդացած և ապա առողջացած երկու հորթ տարւելով մի ուրիշ առողջ գոմ, վարակել են այնտեղի անասուններին:

Մի դէպք ևս. պատմում են, որ մի վարակւած հօտի առողջանալուց 4 շաբաթ չետոյ, երբ մի քանի ոչխարներ այնտեղից փոխադրել են մի այլ առողջ հօտ, վերջինս վարակուել է:

Այսպէս ուրեմն վարակիչ նիւթը աղբի, ամանների, կերի, շորերի մէջ և բրդի, մազերի, կնդակների, եղջիւրների վրայ պահպանում է իր ներգործող ոյժը և ընդունակութիւնը հիւանդութիւն առաջացնելու և տարածելու մի քանի շաբաթուայ և մինչև իսկ ամսուայ ընթացքում: Հիւանդութիւնը տարածւում է նաև աշխատուորների և անասնափառանների շորերի միջոցով. այլ և կատուների, շների, թռչունների, վայրենի կենդանի-

ների, որոնք կրծում են այս հիւանդութիւնից մեռած կենդանիների դիակը և հանճերի, նաև արօտների, ճանապարհների և երկաթուղու վազօնների ու այլևայլ միջոցներով:

Շատ դիտնականների դիտողութիւններ ապացուցել են, որ այս հիւանդութեամբ մէկ անգամ հիւանդացած կենդանին աղատ չէ երկրորդ անգամ ևս նոյն ցաւով բռնուելուց, միայն չետագայ հիւանդութիւնները համեմատաբար աւելի թույլ են լինում, քան նախորդները:

ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Որովհետև դաբաղով հիւանդանում են բոլոր ընտանի կենդանիները, այդ պատճառով կարևոր ենք համարում այստեղ ցոյց տալ և թուել այս հիւանդութեան իւրաքանչիւր տեսակ կենդանուն վերաբերեալ բնորոշ նշանները:

Մեծ եղջիւրաւոր անասուններ. Բնական եղանակով վարակուելիս մեծ եղջիւրաւոր անասունների դաբաղ հիւանդութեան դադանի շրջանը տևում է 3—6 օր, իսկ պատուաստման դէպքում երկու անգամ աւելի կարճ, որից չետոյ կենդանին սկսում է թեթև կերպով դողացնել ամբողջ մարմնով և ապա ջերմել, մարմնի տաքութեան աստիճանը բիւ բարձրանում է, նա կորցնում է իր աշխուժութիւնը, աշխատելու ընդունակութիւնը, ախորժակը (համարեա բոլորովին դադարում է

ուսելուց), շուտ շուտ սկսում է ջուր խմել կամ
դունչը պահել ջրի մէջ. շատ անգամ կենդանու
զլուխը, ականջները, եղջիւրները և ոտները խիստ
սառն են լինում: Այս դրութիւնը տևում է սո-
վորաբար մի քանի ժամ, որից յետոյ մարմնի տա-
քութիւնը նորից երևտն է դալիս և կենդանին
նոյն իսկ սկսում է ջերմել: Կղկղանքը, մէզը և կա-
թը շատ քիչ են արտադրւում: Կաթը դեղնաւուն
գոյն է ստանում, դառնում է թելաձիգ, զզուելի
համ է ունենում, արտադրւում է լորձուքի, տալի
նման, քիչ սեր է տալիս, եփելիս հեշտութեամբ
մակարդւում է, կարագ ստանալու համար շատ
դժուարութեամբ է հարւում, լաւ չէ մակարդւում
պանիր պատրաստելու համար: Կենդանու կաշին
չորանում է և տաքանում, բերանի, ռունդների և
հեշտոցի մաղասամաշկն ևս չորանում, տաքանում
և կարմրում է և յետոյ ծածկւում թելաձիգ մաղա-
սով. այս դրութեան մէջ կենդանին դժուարու-
թեամբ է կարողանում որոնալ և կուլ տալ՝ մա-
նաւանդ կոշտ կերը, սկսում է առատ թուք ար-
տադրել և բերանով չփչփացնել. սաստիկ ծանրու-
թիւն է զգում, արագանում է շնչառութիւնը,
զարկը և սրտի բարխումը, կենդանին կախ գցած
է պահում զլուխը և սիրում է պառկել: Այս բո-
լորից 24—48 ժամ անցնելուց յետոյ մարմնի գա-
նազան մասերում նախ բերնում, շրթունքների, լեզ-
ւի, լնդերքի, ալտերի վրայ և ապա քթածակների,
աչքի եղջերամաշկի, ստիների, նրա պտուկների, սե-
ռական անդամների, կնդակների պսակների, նրանց

միջև եղած կաշուի վրայ նկատւում են սկզբում
թափանցիկ, դեղնաւուն, իսկ վերջերը փոքր ինչ
պղտոր հիւթ պարունակող կորեկի հատիկից սկսած
մինչև շլորի մեծութեամբ բոլորածե (թէպէտ եր-
բեմն լինում են նաև երկայնաձև և ուրիշ անկա-
նոն ձևերով) կարմրակար և դեղնաւուն հիմք ունե-
ցող բշտիկներ: Այսպիսով հիւանդութիւնը կենդո-
նանում է երկու տեղերում՝ ա. դնչում, որի պատ-
ճառով և կոչւում է դնչի վարակիչ հիւանդութիւն,
և բ. կնդակների մէջ, այդ պատճառով էլ կոչւում
է կնդակների վարակիչ հիւանդութիւն: Սոյն երկու
միատեսակ հիւանդութիւնները կարող են երևան
գալ կամ միասին և կամ առանձին առանձին: Եթէ
լաւ նայենք, հիւանդ կենդանու բերանի մէջ, բացի
բշտիկներից մենք կնկատենք, որ լեզուն, լնդերը,
շրթունքները և բերանի ալ մասերը ուռել, կար-
մրել են:

Սովորաբար այդ բշտիկները 1—2 օր անցնե-
լուց յետոյ տրաքտաքւում են և կարմիր խոցեր
(տե՛ս նկ. 1 և 2) բացւում, որոնք երբեմն շատ մեծ են
լինում: Այդ խոցերը
բարեյաջող պայման-
ներում 5—7 օրուայ
ընթացքում կարող են
առողջանալ: Բշտիկ-
ների պատուելովը
կենդանու ջերմը հետ-
զհետէ պակասում



Նկար 1.

է, ուրախ տրամադրութիւնը վերականգնում է. կենդանին ուղիւմ է ուտել և սկսում է քիչ որոնար: Լորձնահոսութիւնը և որոճալու դժուարութիւնը աւելում է մինչև կենդանու առողջանալը: Այս հիւանդութեամբ կենդանին նիհարում է, մաշում և կաթը կորցնում: Բացի այդ, չլի կովերը երբեմն վիժում են, գեռ մօրը ծծող և կամ ծծելուց դադարած հորթերը սատակում են աղիքների վրայ առաջացած թարախակոյտերի և կամ անդա-



Նկար 2.

մալուծութեան պատճառով: Կենդանին կարող է մեռնել միայն այն դէպքում, երբ բարդութիւններ են առաջանում: Այսպէս օրինակ շատ դէպքերում հիւանդութիւնը բարդւում է նրանով, որ վնասւում է աչքերի, շնչառութեան ճանապարհի (բրօնխների), որկորի, ստամոքսի և աղիքների մաղասամաշկը, լեզուն ուռչում է, դուրս են գալիս ուռուցքներ, որոնք թարախակալում են և վերջը թունաւորելով կենդանուն, մահ են պատճառում:

Կնդակների հիւանդութեան ժամանակ նրանց ծեղրերի մէջ պսակը և կրունկը կարմրում են և տաքանում: 1—2 օրուայ ընթացքում այդ միւնոյն տեղերում դուրս են գալիս դեղնագոյն բշտիկներ (անս նկ. 3 և 4), ինչպէս բերանի մէջ էր, որոնք աստիճանաբար մեծանալով, շրորի մեծութեան են հասնում: Բշտիկները պատառուելուց յետոյ վեր-



Նկար 3.



Նկար 4.

քեր են գոյանում, որոնք վիրակեղևների (քոսերի) տակ 8—14 օրուայ ընթացքում առողջանում են: Անբարեկաջող պայմաններում, երբ ախտը անմաքուր է, արօտատեղերը ճախճախտաւ, երբ եղանակը խոնաւ է և ցուրտ, անասունի աշխատանքը դժուարին է և չօգնեցուցիչ, երբ նրան չեխտու կոշտ ու կոպիտ, անհարթ, քարքարոտ ճանապարհներով արագ արագ բշում են, վերքերն սկսում են մեծանալ, կենդանու ոտներն ուռչում

են, նա կաղում է և դժուարանում է նոյն իսկ մի քաջ անգամ անել. այսպիսի դէպքում շատ հեշտութեամբ կնդակի պսակի, կակղանի (МЯКИШЪ) և ճեղքի բորբոքում է առաջանում, որ յետոյ տարածւում է կնդակների մասին մասերի վրայ: Կնդակի մաշիկի (БАШМАКЪ) տակ գոյանում են թաւախակոյտեր, որոնք պատռուածք են բաց անում պսակի վրայ կամ ճեղքում են ամբողջ կնդակը (փափուկ մասերը) և այդպիսով անշատում, պոկում մաշիկը և կամ հիւանդութիւնն անցնելով կնդակի յօդերի և կապոյցների վրայ, քայքայում են նրան: Յաճախ կնդակը վայր է ընկնում, որ շատ վատ հետեանք է ունենում: Երբեմն բշտիկներ և վէրքեր են գոյանում մինչև ոտնակապի յօդը (ПУТОВАЯ СВЯЗКА) և աւելի վերև, վնասւում են մինչև իսկ ստիները և պտուկները, այս բոլորին կարող է միանալ նաև ստիների բորբոքումը:

Այս հիւանդութեան ժամանակ երբեմն եղջիւրի հիմքի մօտ եղած կաշին ևս վնասւում է, նա ուռչում է և սեղմելիս կենդանին ցաւեր է զգում: Այսպիսի ժամանակ եղջիւրները տաքացած են լինում և եթէ թեթեւ կերպով ձեռք տանք, կենդանին ցաւ կզգայ:

Ոչխարների և այծերի դաբաղ. Այս կենդանիներն աւելի յաճախ կնդակների հիւանդութիւն են ունենում և շատ քիչ անգամ բերանի խոռոչի կամ երկուսը միասին: Ոչխարների և այծերի թէ բերանի խոռոչում և թէ կնդակների վրայ բշտիկներն աւելի պակաս նկատելի են, քան մեծ եղջիւ-

րաւոր անասուններին: Սրանց ոտքերի զանազան մասերում կաշին սկսում է կարմրել և ուռչել, որի հետեանքն այն է լինում, որ նոյն տեղերում սկսում են մանրիկ բշտիկներ դուրս գալ, որոնք շուտով տրաքւում են և նրանց տեղը մնում են կեղեքներ կամ փոքրիկ խոցեր: Շատ անգամ վնասւում են նաև կնդակի պարկիկները և լցւում են Թարախանման նիւթով: Այդ պարկիկները կնդակի պսակի առաջևից բացւում են և եթէ սեղմենք, ապիտակ որդնանման մի նիւթ է դուրս հոսում: Հասարակ ժողովուրդը կարծում է, թէ այդպէս կարակուկով կարելի է հիւանդութեան առաջն սռնել: Անբարեկաջող պայմաններում ինչպէս ոչխարների, նոյնպէս և այծերի կնդակների յօդերը և ոտիկները կարող են քայքայուել և կնդակներն ճկնել:

Խոզերի դաբաղ. Սրանց բերանի խոռոչը շատ քիչ է պատահում, որ հիւանդանայ դաբաղով, երբեմն միայն աւելի քնքոյշ, ընտիր տեսակի խոզերի վրայ է նկատւում և այն ժամանակ սովորաբար բերանի մաղասամաշկը և կնճիթի երեսը ծածկւում են բշտիկներով և խոցիկներով (եթէ խոզերի կրնիկը բաց դոյն ունի, նրանց վրայ հեշտութեամբ կարելի է տեսնել այդ բշտիկները և խոցիկները): Այս կերպ հիւանդ խոզը դժուարութեամբ կկարողանայ ընդունել քիչ թէ շատ կոշտ կեր: Սովորաբար խոզերի կնդակներն են հիւանդանում և յատկապէս նրանց փափուկ մասերն են բորբոքւում: Երբեմն կնդակի մաշիկի վրայ երևան են գալիս

կարմիր բծեր կամ շերտեր, վերջը բորբոքում է առաջանում և եթէ կնդակներին ձեռք տանք, կրկնաբար, որ նրանք տաքացել են: Այդ բոլորին շատ ահագամ հետևում է այն, որ կնդակի վրայից մաշիկը բաժանւում է, որովհետև խոզերը, մանաւանդ զեռահասները իրենց անհանգիստ բնաւորութեան պատճառով անկարող են կանգնած կամ պառկած մնալ մի տեղում, անդադար վազվզում են ամենայն կողմ և այդպիսով աւելի սաստկացնում կրճղակի բորբոքումը: Եթէ կնդակների անտանելի ցաւերի պատճառով խոնկորներն անկարող լինին ման գալ, վաղել, այն ժամանակ կսկսին քայլել առաջին ոտների ծնկների վրայ, իսկ ետեւիները քաշ տալ գետնի երեսով և կամ առանձին ջանք գործ զեն լով՝ կաշխատեն նրանցով պահպանել մարմնի ետեւի մասը: Եթէ կճղակն է վնասուած լինում, բորբոքումը և բշտիկները սկսում են տարածուել երբեմն աւելի վերև՝ ոտնակապի խաղը կամ մի քիչ էլ աւելի բարձր:

Խոզերի այս հիւանդութիւնը լուրջ բնաւորութիւն է ստանում այն ժամանակ, երբ նրանք սկսում են սաստիկ կաղալ և չեն կարողանում ման գալ: Այսպիսի ժամանակ կնդակի մօտէն մասերը բորբոքուած են լինում. համոզուելու համար պէտք է ձեռք տալ կնդակի այս կամ այն մասին, որ բաւականաչափ տաք է լինում: Կենդանին լարուած վիճակի մէջ է լինում, նա պառկում է, մթմթբթբութում է ցաւերից և երբեմն ակամայից վեր է կենում: Երբ հիւանդութիւնը սաստկանում է, թէ

խսկական և թէ կեղծ կնդակների վրայի եղջերեայ մաշիկները սկսում են բաժանուել պսակից և վայր թափուել: Երբեմն, երբ խոզերին քշում են կոշտ, փոշով ծածկուած կամ անմաքուր ճանապարհներով, կամ երբ խոզերն հէնց իրանք վազվզում են այդպիսի տեղերով, եղանակն էլ խոնաւ, ցուրտ կամ շատ շոգ է լինում, նրանց կնդակների մաշիկները թափւում են: Կնդակի մաշիկն ընկնելուց յետոյ նրա փափուկ մասերից սկսում է սաստիկ աբիւնահոսութիւն, մանաւանդ երբ, կոշտ և քարքարոտ գետնի վրայ ման գալով, ոտքն աւելի զրբաւում է, փտախտ (гангрена) գոյանում և կենդանուն մահ պատճառում: Բարեկարգ պայմաններում և փափուկ գետնի վրայ, մանաւանդ եթէ կենդանին հանգիստ վիճակի մէջ է, մի քանի շաբաթուայ ընթացքում կարող են նոր կնդակներ գոյանալ: Եթէ կնդակների հիւանդութիւնը ծանր տեսակից չէ, այնուամենայնիւ բոլորովին առողջանալու համար 3—4 շաբաթ, երբեմն և աւելի ժամանակ հարկաւոր կլինի, որովհետև այս կենդանիները մի որեւէ տեղում հանգիստ մնալ չեն կարող, ծիշտ ման են գալիս և այդպիսով զրգուում կնդակի բորբոքումը և սաստկացնում հիւանդութիւնը: Խոզերին հանգիստ պահելու միակ միջոցը նրանց ախոռներում փակելն է, իսկ այդ նպատակին կարելի է հասնել ամառ ժամանակ շատ քիչ տեղերում:

Ձնների և ուրիշ մսակեր կենդանիների դարաղ. Այս կենդանիներն ևս հազուադիւրս դէպքե-

բում հիւանդանոցում են դաբաղով, երբ դաբաղով հիւանդ կովի կաթ են ուտում: Հիւանդութիւնը երեւան է գալիս տենդով, մարսողութեան խանգարումով, փսխելով, ախորժակի պակասելով, բերանի մաղասամաշկի և գլխի կաշուի վրայ փամփշտիկներ զոյանալով, երբեմն, երբ ման են գալիս հիւանդ անասունների արտաթորութիւնների մէջ, հիւանդութեան նշաններ են երեւան գալիս նաեւ ոտների վրայ: Այս հիւանդութիւնը բնական մասկեր կենդանիների միջոցով հեշտութեամբ կարող է անցնել մի տեղից մի ալ տեղ և այսպիսով վարակման պատճառ դառնալ:


Սագերի, բազերի և հաւերի դաբաղ. Ընտանի թռչուններն ևս հիւանդանոցում են դաբաղով, երբ արդէն այդ հիւանդութիւնը տարածուած է բնտանի անասունների մէջ. նրանց բերանի խոռոչը և նրա արտաքին մասը, կտուցի մօտ, նմանապէս և մատների արանքում եղած լողաթաղանթները ծածկուած են բշտիկներով. վերջին տեսակի հիւանդութիւնը յատուկ է միայն լողացող թռչուններին: Իսկ առաջինը՝ ոչ լողացող թռչուններին: Հաւերի թթածակերի մօտ, կատարի վրայ, շատ քիչ դէպքերում նաեւ մատների ծայրերին դուրս են գալիս բշտիկներ:

Զիւրի դաբաղ. Այս կենդանին աւելի սակաւ է ենթարկուած դաբաղ հիւանդութեան: Աւելի ձիերի բերանի խոռոչն է վնասուած, քան սմբակը, թէպէտ երբեմն ոտների վրայ ևս երեւան են գալիս դաբաղի բշտիկներ: Զիւրն այս հիւանդութեամբ

բռնուած են այն ժամանակ միայն, երբ հիւանդութիւնը սաստիկ տարածուած է միւս բնտանի կենդանիների մէջ: Զիւրն այս հիւանդութիւնը եղջիւրաւոր անասունների հիւանդութեան բոլորովին նման կերպով է արտադրուած: Կենդանին առողջանում է 7 օրուայ ընթացքում, թէպէտ պատահում են երբեմն նաեւ վնասաբեր բարդութիւններ:

Մարդկանց դաբաղ. Մարդիկ գործածելով հիւանդ կենդանիների հում կաթը և կամ զրանց արտաթորութիւնների հետ զործ ունենալով, հիւանդ կովեր կթելիս կամ ձեռքերով բերանի խոռոչը հետադոտելիս, վարակուած են և ձեռների ու բերանի նոյնպիսի հիւանդութիւն ստանում: Հիւանդ կովի հում կաթ գործածելուց բերանի մաղասամաշկի և շրթուքների վրայ դուրս են գալիս նոյնպիսի բշտիկներ, ինչպէս և եղջիւրաւոր անասունների բերանում. փոքր երեխաները մինչև իսկ երբեմն այդ հիւանդութիւնից մեռնում են:

Գերմանացի ուսուցչապետ Գերտվիդը փորձելու նպատակով երեք բժիշկների հետ միասին զիւր մօր 4 օր շարունակ դաբաղով հիւանդ կովի կաթ է խմել: Զորրորդ օրը Գերտվիդը և բժիշկները սկսել են ջերմել. նրանց գլուխն սկսել է ցաւել, բերանը չորացել և տաքացել, ձեռները և մատները սկսել են քոր գալ, հինգերորդ օրը ձեռների և մատների լեզուի վրայ կարմրութիւն և ապա ուռուցք է երեւացել: Այս բոլորից յետոյ շրթուքների, լեզուի, լեզերքների և բերանի ալիւալ մասերում սկսել են երեւան բշտիկներ, մեծ մասն իրենց շրթուքների վրայ:



կով լի դեղնադոյն փամփշտիկներ, որոնք հետևեալ օրն սկսել են մեծանալ, պատառուել և իրենց տեղերում վերքեր թողնել: Այս ամբողջ ժամանակը մի բան կուլ տալիս, խօսելիս և ծամելիս նրանք բերանում զգացել են սաստիկ ալրոյ ցաւեր: Այդ փոքրիկ վերքերը վերջը ծածկուել են կեղևով և 10—12-րդ օրը սկսել են առողջանալ:

Այս և շատ ուրիշ փորձեր ապացուցեցին, որ դաբաղով հիւանդ անասունների կաթը հում չպէտք է դործ ածել. պէտք է նախ եփել, որով կոչնչանան դաբաղի բակտերիաները և կաթը անվնաս կրդառնայ:

Ոտների վրայ բշտիկներ շատ քիչ անգամ են դուրս գալիս, միայն երբ գիւղացիները բորիկ ման գալով, իրենց ոտները հիւանդ կենդանիների արտաթորութիւնների մէջ են ձգում, այն ժամանակ ոտներն ևս վարակւում և հիւանդանում են: Ձեռների վրայ, մատների ծայրերին եղունգների մօտ ևս բշտիկներ են դուրս գալիս և մատնաշունչի նման հիւանդութիւն առաջացնում:

Ձնայելով դաբաղ հիւանդութեան այս նշաններին, այնուամենայնիւ մարդ երբեմն կարող է շփոթել եղջիւրաւոր անասունների ուրիշ հիւանդութիւնների՝ ժանտախտի գլխի ուղեղի թաղանթաբեր բորբոքման, դիֆտերիաի հետ: Սակայն ժանտախտի ժամանակ բշտիկներ չեն զոյւնում, թէպէտ կաշուի տմենավերին շերտի վրայ խոցեր են առաջանում: Բացի սրանից ժանտախտի ժամանակ կրճատւի հիւանդութիւն տեղի չէ ունենում: Ժանտախ-

տի ժամանակ տենդը, մարսողութեան դործարանի խանգարուելը և մարմնի քաշի մէջ առաջացած կորուստն աւելի դժուար է և զգալի, քան դաբաղի ժամանակ:

Նոյնը վերաբերում է նաև ծանր գլխի ուղեղի թաղանթի բորբոքման, երբ շատ անգամ հիւանդադածների մեծ մասը մեռնում են: Այս հիւանդութեան ժամանակ առաւելապէս վնասւում են բթի, հակառի և ծնօտի խողովները, գլխի ուղեղը և նրա թաղանթները: Գլխի խողովի մէջ ինչ որ բորբոքում է առաջանում, աչքերի եղջերամաշկը պրկորուում է լինում և խոցոտւում, եղջիւրը դիւրարեկ է դառնում: Դարաղ հիւանդութիւնն աւելի սրագ է տարածւում, քան ժանտախտը, իսկ վնասները գլխացաւն անմիջապէս մի կենդանուց միւրին չի անցնում, երեան է գալիս միայն որոշ տեղերում և ունի վարակիչ նիւթ:

Յաճախ այս երեք տեսակ հիւանդութիւնների արդուութիւնները, մանաւանդ Ռուսաստանում, մասն են լինում իրար. այդպիսի դէպքում դժուար է լինի ճիշտ կերպով որոշել հիւանդութիւնը: Դարաղ հիւանդութիւնը, ինչպէս առաջ էլ ասուած է, եճաւ մասամբ բարեկազոյ վախճան է ունենում: Երբայն շատ անբարեկազոյ սննդալին և մթնոլորտային պայմաններում հիւանդացածների, մանաւանդ հորթների, գառների և գոհինների 4—50% ճաւում է: Սակայն այդ հիւանդութեան պատառած վնասները տնտեսական տեսակէտից խիստ զալի են և շատ տեղերի գիւղատնտեսութեան

արդիւնաբերութիւնը խանգարելու զլիաւոր պատ-
ճառ են հանդիսանում՝ շնորհիւ կաթի պակասե-
լուն, կենդանու ուժասպառութեան, որ առաջա-
նում է հիւանդ կենդանիների պակաս բանալու-
թեամբ կեր ընդունելուց և այլն, նաև այն հան-
գամանքից, որ այդպիսի ժամանակ կենդանիներին
ոչ կարելի է մի տեղից մի ուրիշ տեղ փոխադրել,
ոչ ծախել, ոչ էլ որևէ կերպ դրանցից օգտուել,
մանաւանդ երբ հիւանդութիւնը շուտ շուտ կըր-
կնւում է: Այսպէս օրինակ, Փուկսը հաշուել է, որ
1869 թ. միայն Բադենի դքսութեան մէջ դաբաղի
պատճառով վնաս է եղել 1,000,000 բուբ: Հաշ-
ւած է, որ իւրաքանչիւր տարի Փրանսիան միջին
հաշուով վնասուում է մինչև 1,800,000 բուբ: Փրանսիայում և
Զուիցերիայում իւրաքանչիւր տարի համարեա ամբողջ
անասունների $\frac{1}{4}$ մասը հիւանդանում է այս հիւանդութեամբ: Բուլէյ
հաշուում է, որ 1874 թ. Փրանսիայում հիւանդա-
ցել է դաբաղով մոտաւորապէս 700,000 զլուխ,
որոնցից 7000-ը մեռել է կամ մորթել են: Ահա
այս պատճառով նա հաշուում է, որ այդ հի-
ւանդութիւնից տարեկան վնաս է առաջանում
11—13 միլիոն բուբլով:

նախազգուշացուցիչ միջոցները, բժշկելն ու
պատուաստելը:

Դաբաղով հիւանդ կենդանուն շատ հեշտու-
թեամբ կարելի է բժշկել, նա երբեք չի մեռնի այս
հիւանդութիւնից, եթէ միայն լաւ խնամուի. բայց
եթէ հիւանդը անխնամ թողնուի և անուշադրու-
թեան մատնուի, հիւանդութիւնը երկարատե կըր-
կնի, ծանր կերպարանք կստանայ, կեղակաները կա-
նոթ են թափուել, ստինքը սաստիկ բորբոքուել,
կաթուկների անցքերը փակուել, արիւնը վարակուել
և այն ժամանակ արդէն ոչ մի հնար չի լինի փրկ-
ել հիւանդ կենդանուն, նա կմեռնի:

Այս հիւանդութեան առաջն առնելու համար
մենից առաջ կարևոր է հիւանդ կենդանիներին
եռացնել առողջներից, դաշտ չուղարկել արածելու:
Եթէ հիւանդութիւնը տարածուել է արդէն գոմի
անասունների մէջ, պէտք է առողջներին անմիջա-
րէս հեռացնել նրանց մօտից և հնար եղածին չափ
հիւանդներին մատակարարել՝ մաքուր օդ, խմելու
բերանը ողողելու համար մաքուր կամ քիչ
դաթթու (соляная кислота) կամ քացախ խառ-
ած ջուր, տակները փռելու համար զործ ածել
լաքուր, չոր և փափուկ յարդ կամ ուրիշ փռելու
իւթ, պինդ և չոր կերը պակասեցնել և տալ դիւ-
մարսը: Սմենից աւելի յարմար է ալիւրից, թե-
ից կամ խոշոր աղած հացահատիկներից չրա-
սուն լափ տալ օրական 5—6 անգամ, Սգտակար
զործ ածել նաև խաշած շաղգամի կամ կարթո-

Ֆիլի հետ խառնած ալիւր կամ թեփ: Կարելի է տալ նաև լաւ հիւթալի խոտ և առուոյտ, միայն ոչ շատ: Աղբը հարկաւոր է շուտ շուտ դուրս թափել, որ գոմը մաքուր լինի. քանի որ հիւանդութիւն առաջացնող բացիւնները աղբի մէջ կարող են իրենց գոյութիւնը պահպանել միմիայն 8—14 օր և ոչ աւելի, ահա այս պատճառով պէտք է առողջանալուց այգիքան օր յետոյ միայն առողջ անասուններին տանել գոմը: Որովհետև այդ վարակիչ սաղմը ապրում է աղբի մէջ, այդ պատճառով պէտք է կամ բոլորովին հեռացնել աղբը, գոմը շատ լաւ մաքրել և կամ աշխատել ախտահանել, ուստի հարկաւոր է խտացնել (օր. տոփանով) հաստ շերտով վայր թափուած թարմ աղբը և այդպէս թաղնել 8 օր նեխուելու: Շնորհիւ աղբի մէջ առաջացած բարձր աստիճան տաքութեան և ուրիշ պատճառների, դաբաղ հիւանդութիւն առաջացնող բացիւնները բոլորովին կորցնում են իրենց ոյժը: Որպէսզի աղբի վերին շերտն ևս անվնաս դառնայ, բաւական է, եթէ միայն ծածկուի առողջ աղբով:

Հէնց որ հիւանդութիւնը տարափոխիկ է դառնում, բժշկելու պայմանները դժուարանում են, այս պատճառով պէտք է ամեն կերպ զգուշ լինել, այս պատճառով անասուններին հիւանդների հետ չարածացնել և ջուր չխմացնել: Շոգ եղանակներին հիւանդ անասուններին պէտք է պահել ստուերոտ կամ զով, մութ տեղ, որտեղ ճանճեր չկան:

Իրրէ նախազգուշացուցիչ միջոց խորհուրդ ենք

տալիս յդի կովերին շուտով առանձնացնել, որպէս չի չվիժեն, հորթերն անվնաս մնան: Վարակուած գոմերի հորթերին պէտք է վաճառել, քանի ղեռնրանք 4—5 օրական են, որովհետև վարակուած մօր կաթից սովորաբար հորթերը շատ շուտով են մեռնում: Այդպիսի կովերի կաթը վնասակար է նաև մարդկանց, մանաւանդ երեխաների համար, այս պատճառով երբէք չպէտք է գործածել այսպիսի կաթ: Սոյն գոմի առողջ կովերի կաթն ևս նախքան գործածելը պէտք է լաւ եփել և երբէք հում գործ չածել: Դաբաղով հիւանդ կենդանիների միտը վնասակար չէ մարդուն: Հարկաւոր է առանձնացնել նաև այն բոլոր շահիլ անասուններին, որոնք դեռ մի տարեկան չկան, որպէսզի այդպիսով փրկւած լինենք նրանց կեանքը:

Դաբաղով հիւանդ կենդանիներին խնամողը ձեռների վրայ վերքեր, կարուածքներ չպէտք է ունենայ, շատ զգուշ պէտք է լինի և երբէք չպէտք է ձեռք տալ կամ մօտենայ առողջներին և մարդկանց, որպէսզի այդպիսով հիւանդութիւնը տարափոխիկ բնաւորութիւն չստանայ և տարածուէր: Այս պատճառ չդառնայ: Իւրաքանչիւր անգամ հիւանդ կենդանիների հետ գործ ունենալուց յետոյ պէտք է ձեռները լաւ լուանալ: Երբէք չպէտք է վարակուած գոմի անասուններին սալլերին լծած կամ այնպէս տանել մի ուրիշ տեղ, ուրիշ գիւղ: Այն ամանները, որոնց հետ հիւանդ կենդանիները փուլմն են ունեցել կամ որոնց միջից ջուր կամ սփ են խմել, չպէտք է գործ ածել առողջների

համար, որպէսզի այդպիսով հիւանդութիւնը չտարածուի: Հիւանդութիւնը թեթեանալուց յետոյ, երբ կենդանու ախորժակը բացուած է, պէտք է տալ դիւրամարս կեր, միայն փոքր քանակութեամբ, որպէս զի ստամոքսի խանգարում չառաջանայ:

Երբէք չպէտք է գնել և զիւղ բերել վարակւած գիւղերից խոտ, յարդ, որովհետեւ դաբաղի վարակիչ նիւթը բուսական երկար ժամանակ կարող է պիմանալ խոտի և յարդի մէջ և նրանց միջոցով հեշտութեամբ կտարածուի գիւղերը: Ուրիշ տեղերում նոր գնած կենդանի երբէք չպէտք է միանգամից գիւղական հօտի մէջ խառնել, այլ պէտք է 6 օր առանձին դնում պահել, որ եթէ թագնուած վարակիչ նիւթ կայ, յայտնուի:

Հէնց որ մէկը նկատեց, թէ իր անասուններից մէկը կամ մի քանիսը հիւանդ են, իսկոյն պէտք է բերանները ողողէ մաքուր ջրով: Աւելի լաւ է այսպիսի դէպքում մի վեղրոյ մաքուր ջրի հետ մի հացի գդալ կամ մի շիշ ջրի հետ 2—3 թէլի գդալ աղաթթու խառնել և այնպէս ողողել բերանը (մանաւանդ լեզուն և բերանը) օրական երկու երեք անգամ: Օգտակար է ճանաչուած նաև քացախախառն սառը ջուրը, որի հետ խառնում են այնքան անհալ մեղր (сотовый медь), որպէսզի ստացուի մածուցիկ հեղուկ, որը և օրական 3—4 անգամ քսում են բերանի այլ և այլ մասերին: Պէտք է խմացնել միշտ աղաթթու խառնած մաքուր ջուր: Շատ օգտակար կլինի վերքերը թրջել

50% շիպաջրով և բշտիկները տրաքուելուց յետոյ մնացած վերքերը, բերծուածքները և կճղակների վերքոտ մասերը օրական երկու երեք անգամ հէնց դրանով կամ կաղնու կամ ուռնու կեղեից եփած ջրով էլ լուանալ:

Անասունների բերանի և ոտքերի վերքերը աւելի օգտակար է լուալ օրական երկու անգամ 20% կապոյտ պիոկտանինով (синий пиоктанинъ), լուծելով այդ դեղի 2 մասը 100 մաս պարզ ջրի մէջ: Փորձերը ցոյց են տուել, որ այդ աժան դեղը մի երկու օրուայ ընթացքում բոլորովին առողջանում է վերքերը *):

Փրանսիացի բժիշկ Տարրը վերջերս փորձել է դաբաղ հիւանդութիւնը բժշկել բրոմական թթուութով (хромовая кислота) և յաջող հետեանքի է հասել: Այս միջոցով առողջացել են մինչև 1500 շլուխ անասուն: Բերանի բշտիկները խիստ զգայուն են, որովհետեւ ամեն անգամ կենդանին կերակուրը բերանն առնելիս զիպցնում է ուռած տեղերին և ցաւեր պատճառում, որի համար և հրաժարւում է կեր ընդունելուց: Բայց եթէ բրոմական թթուութեանը այդ տեղերին, ցաւերն իսկոյն կանցնեն, քսելուց $\frac{1}{2}$ —1 ժամ յետոյ կենդանին կսկսէ առողջների պէս կերակուր ուտել և բոլոր առողջացող կենդանիների բերանի, քթի և կճղակների բշտիկ-

*) Մի մսխալ պիոկտանինն արժէ մօտաւորապէս 15 կոպ. այդ քանակութեամբ կարելի է մի քանի հիւանդ բժշկել:

ները 1—2 օրուայ ընթացքում սպիներով կծած-
կուին: Այս նպատակով դործադրուող քրոմական
թթուտար պէտք է մաքուր և մանիշակագոյն-
կապոյտ լինի. սովորական դործածուող մուգ կար-
միր քրոմական թթուտար տանդնաձև բիւրեղացած
է լինում և բոլորովին անպէտք է, որովհետև իր
քաշի $\frac{1}{3}$ մասը ծծմբաթթուտ է պարունակում:

Վերջերս զիւղատնտեսներից մէկը իր երկար-
ամեայ յաջող փորձերից յետոյ եկել է այն եղրա-
կացութեան, որ դափնու պտուղները (ЛАВРОВЫЕ
ЯГОДЫ) այս հիւանդութեան դէմ կռուելու լաւ
միջոց են: Փորձը ցոյց է տուել, որ եթէ վերցնենք
20 հատ դափնու պտուղ (1½ դրախմ) իր կեղևով
(կեղևը միջուկից աւելի ուժեղ է ներգործում),
վրան 15 մսխալ աղ ցանենք և հացի մէջ խառ-
նենք, կստանանք մի չափ, որ բաւական է մի ան-
գամ ուտացնել մի հիւանդ անասունի: Տուած ժա-
մանակը պէտք է ուշք դարձնել, որ կենդանին ան-
պատճառ կուլ տայ: Թէ մաքսողութեան դործա-
րանների և թէ նեարդային համակարգութեան
վրայ աղ ցանած դափնու պտուղների զրգուից ներ-
գործութիւնը սաստիկ զօրեղ է և եթէ սրանից
աւելի մեծ չափով դործ ածուի, կենդանին կարող
է կատաղել:

Հէնց որ հեռաւոր շրջակայքում երևան եկաւ
այս հիւանդութիւնը, պէտք է իսկոյն շարաթը մի
անգամ ամբողջ հօտը կերակրել վերոյիշեալ խառ-
նուրդով. բայց եթէ հիւանդութիւնը շատ մօտեցել
է, այն ժամանակ երկու օր շարունակ, օրական

երկու անգամ պէտք է տալ: Սակայն եթէ նախ-
քան այս պատրաստածով կերակրելը յանկարծ հօ-
տի մէջ դարաղ առաջանայ, այն ժամանակ հարկա-
ւոր է երկու օր շարունակ՝ օրական երկու անգամ,
խսկ յետոյ կրկին երկու օր՝ օրական մէկ մէկ ան-
գամ կերակրել դրանով և այդ բաւական կլինի
անասունների կոտորածի առաջն առնելու համար,
և թէպէտ կարող է պատահել, որ դարձեալ հի-
ւանդութեան նշաններ երևան, սակայն այդ շատ
թեթեւ կլինի և ամբողջ հօտը շատ շուտով կառող-
ջանայ: Իսկապէս ասած դափնու պտուղը ոչ թէ
հիւանդութիւնը բժշկում է, այլ մի նախազգուշա-
ցուցիչ միջոց է: Եթէ նախքան այդ պտղով կերա-
կրուելը հօտի մէջ հիւանդ կենդանի է ընկել, այդ
պտուղներով կերակրուելով հիւանդութեան տա-
րածումը սահմանափակում է և դուցէ միայն
ծ—10% հիւանդութեան դէպքեր տեղի ունենան,
որոնց համար ամեն ժամանակ կարելի է բժշկելու
և խնամելու առանձին տեղ գտնել:

Գերմանացի յայտնի անասնաբույժ ուսուցչա-
պետ բժիշկ Վինկլերը խորհուրդ է տալիս, այս
հիւանդութեան ժամանակ հիւանդ կովերի կաթը
լաւ եփելուց յետոյ խմացնել նրանց մօտ եղող բո-
լոր առողջներին, որով վերջինները դժուարու-
թեամբ ենթակայ կլինեն այդ հիւանդութեան:
Հորթերից, արջառներից և մողիններից իւրաքան-
չիւրին հարկաւոր է տալ օրական 5—7 գրվանքայ,
իսկ հասակաւոր անասուններին՝ 10—15 գրվան-
քայ: Այս բանը պէտք է կրկնել 8 օր անընդհատ:

Անասունների ոտքի դաբաղը բժշկելիս, ամենից առաջ կարևոր է հիւանդին հանգիստ տալ, կծղակներն և վերքերը մաքուր պահել անմաքրութիւններից, աղբից, որի համար պէտք է առաջուց լուալ մի շիշ մաքուր ջրի հետ խառնած մի հացի գդալ կարբօլաթթուաւի լուծուածքով, որից յետոյ վերքը պէտք է ծածկել մաքուր քաթանով և կապել: Վերքը օրական երկու անգամ, առաւօտեան և երեկոյեան, երբ սովորաբար դով է լինում, պէտք է լուալ և ամեն անգամ լաւ փաթաթել ու կապել: Վերքերի վրայ պէտք է ցանել նաև կպրիտի փոշի (порошок нафталина): Կարելի է ցաւոյ ոտների վրայ դնել նաև մի մաս քացախի և 40 մաս սառը ջրի խառնուրդի մէջ թրջած շոր ու կապել: Եթէ կենդանու ոտները սաստիկ ցաւում են, այնպէս որ հիւանդն անկարող է լինում կանգնած մնալ, պառկում է, այդպիսի ժամանակ նրա աակը պէտք է փռել առատ չոր փռուացք, որ կողերը չվնասուեն: Եթէ կնդակի փափուկ մասերը բորբոքում են և թարախակալում, որի պատճառով և եղջերային մաշիկը բաժանում է, այն ժամանակ պէտք է հեռացնել մաշիկի ամբողջ բաժանուող մասը, որ պէսզի այդպիսով թարախն սկսէ ազատ դուրս հոսել և միաժամանակ արդելք դառնայ նրա տաճուելուն, որից յետոյ վերքը պէտք է լուալ և նրա վրայ դնել կարբօլաթթուաւի մէջ թաթախած մի մաքուր շորի կտոր (մօտաւորապէս 1¹/₂ հացի գդալ կարբօլաթթուաւը խառնած մի շիշ վուշի, մէթի (ձիթապտղի) կամ մի օրեւէ այլ իւղի

հետ): Այս բանը պէտք է կրկնել օրական երկու երեք անգամ: Կնդակների վերքերն ամենից աւելի լաւ բժշկւում են զաճի (կանաչ արջասպ կամ ծծմբաւ երկաթ — сѣрнокислое желѣзо или зеленѣный купоросъ), ցինկի (սպիտակ) կամ կապոյտ քարի (պղնձի արջասպ — синій купоросъ), ջրի, կարբօլաթթուաւի, կրաշրի լուծուածքներով:

Այստեղ չիշուած բոլոր դեղերը՝ աղաթթուաւ, կարբօլաթթուաւ, քափուրի, նաւթիտ կամ կպրիտ, չաճ և այլն շատ արժան են և բոլոր դեղատոնքում կարելի է ձեռք բերել: Եթէ այլ և այլ պատճառներով այս դեղերը ձեռք չբերուեն, այն ժամանակ վերքերը փոխանակ աղաթթուաւխառն ջրով լուանալու, կարելի է լուանալ քացախախառն ջրով, եթէ քացախ ևս չգտնուի, պէտք է ուղղակի մաքուր սառն ջրով լուանալ:

Հիւանալի և միւսնոյն ժամանակ ձեռքի տակ եղած միջոց է համարւում կնդակներին և նրա չուրջն եղած տեղերը մազիթ բսելը (древесный деготь, липовый или березовый): Վերք եղած տեղերի վրայ օրական 1—2 անգամ պէտք է քսել այդ մազիթից, իսկ եղջիւրների արանքում պէտք է դնել մազիթի մէջ թաթախած մի կտոր քղբ (паклевый тампонъ), որով վերքը շուտով կառողջանայ:

Նոյնպիսի բարեյաջող հետեւանքներ կունենայ կրեօլինի կամ կրեօզօլինի 3—5% լուծուածքը: Հարկաւոր է օրական 2—3 անգամ լուանալ հիւանդների բերանի խոռոչը, նոյնպէս բսել կծղակ-

ներին և խոցոտուած ստինքին: Վերջինները 5—8 օրուայ բնթացքում կբժշկուեն, իսկ հիւանդները կսկսեն բաւարար չափով կեր ընդունել:

Կնդակները վնասուելուց չեաոյ հարկաւոր է ոտքի մերկացած մասերի վրայ քաղցրիտ (ղլիցերին) քսել, բայց եթէ կնդակը բոլորովին ընկել է և հիւանդութիւնն արդէն հասել է մինչև չօղերը, ի հարկէ ոչ մի բան չի կարող օգնել և միակ միջոցը մնում է կենդանուն մորթել:

Եթէ կենդանու ստինքի վրայ բշտիկներ են դուրս եկել և վերքեր առաջացել, այս դէպքում նախ պէտք է վերքերը լուանալ տաք ջրով և ապա օրական երեք անգամ քիչ կարբօլաթթւուախառն մաքուր ջրով կամ շքի լուծուածքով. օգտակար է դործ ածել նաև վազելին-ոսկեբորակի օծանելիք (вазелино-борная мазь) (20 մաս վազելին և 5 մաս ոսկեբորակական թթւուա կամ բորակ) կամ քաղցրիտ, որոնցից ամենայն օր պէտք է քսել ստինքի և պտուկների վրայ:

Վերին աստիճանի օգտակար է ճանաչուած ստինքի վրայ եղած փամփշտիկների և վերքերի վրայ կապարի կամ ցինկի օծանելիք (свинцовая или цинковая мазь): Եթէ ստինքի բորբոքումը սաստիկ լինի, հարկաւոր է ուռած և տաքացած տեղի վրայ դնել ծիւնով կամ մանր ջարդած ուռուցով լի մի տուպրակ: Տուպրակի չորս ծայրերին պարան պէտք է կապել, որի ծայրերը պէտք է բերել-կապել կովի դաւակի վրայ: Սառուցը 3—4 օր պէտք է պահել մինչև որ տաքութիւնն անցնի

և ուռուցքն իջնի: Ստինքի կոշտացած մասը պէտք է բժշկել քափուրի իւղ (камфарное масло), քափուրի օծանելիք (камфарная мазь), մանիշի օծանելիք (юдистая мазь) և կամ հասարակ մոխրագոյն յապոն (сѣрое мыло) քսելով: Այս բանը պէտք է կրկնել օրական երկու անգամ:

Պտուկների անցքերը փակուելիս հարկաւոր է դործ ածել կաթնային խողովակներ (доильные трубки, молочный катетръ), որոնք ունեն նաև այն յարմարութիւնը, որ այդպիսի հիւանդ կենդանիներին կթելուց առաջացած զրգիւններից ազատում են:

Բաւարիայում այս հիւանդութիւնը փորձել են բժշկել Կնէյպի եղանակով՝ ջրով և չաշող հետեանքների են հասել: Կենդանուն գոմի կամ մի այլ յարմարաւոր շինութեան մի որեւէ անկիւնում շեղաւորելով, սկսել են սառն ջրով լուանալ նախ զլուխը, ապա մէջը, կողերը և վերջապէս ոտները: Խուանալուց չեաոյ անմիջապէս կենդանու մարմինը սկսել են շփել խողանակներով: Այս բոլորը կատարում էին 2 մշակ 4—5 րոպէում, որից չեաոյ ախտանշաններին փաթաթելով մեծ և հաստ ջուլով, շեղաւորել են առատ, չոր յարդ փռած գոմում: Պենդանիների մարմինը իսկոյն չորացել է և մի քանիսը մինչև իսկ բրտնել: Որպէս զի չմրսեն, լուսամուտները և դռները փակում էին և միայն հմբողջ օրուայ ընթացքում մի անգամ, այն էլ կէս օրին էին բաց անում օդը մաքրելու համար. Կովերի բշտիկներով ծածկուած կնդակներին և ոտներին

րին քսում էին ջրալի կաւ և ամեն անգամ, երբ քսակը չորանում էր, տաք ջրով լուանալուց լետոյ նորից քսում էին: Շատ կարեւոր նշանակութիւն ունի կնդակների հեղքուածներէ, պսակների և կրունկների վերքերը լուանալու համար լիզօլի (lysol) 3—5% լուծուածքը. Լիզօլի առաւելութիւնն այն է, որ թունաւոր յատկութիւն չունի: Այս վերոյիշեալ եղանակով 5 օր բժշկելուց լետոյ հիւանդութիւնը բարեկաջող հետեանքներ է ունեցել և կարճ ժամանակուայ ընթացքում բոլորովին անյայտացել է. բերանի, լեզուի և շրթունքների վրայի բշտիկներն իսկոյն չքացել են և այլ ևս չեն երևացել, որի հետեանքն այն է եղել, որ կենդանին սկսել է ախորժակով ուտել: Երբ կովերի ստինքի վրայ բշտիկներ են երևացել, վրան քսել են կալենդուլի ոգեթրմոց (тинктура календули), որը իսկոյն յաջող և արագ ներգործութիւն է ունեցել:

Որպէս զի մի որևէ վերք կարճ ժամանակում կանոնաւոր կերպով առողջանայ, առաջին և անհրաժեշտ պայմանն է մաքուր պահելը: Այս միջոցը, ինչպէս տեսանք, անհրաժեշտ է գործադրել նաև դաբաղ հիւանդութեան ժամանակ: Ամենաառատ փռուածքն անգամ անկարող է բոլորովին արգելք դառնալ, որ կենդանիների վերքոտ ոտները աղբի և մէղի մէջ չընկնեն, ուր անհամար քանակութեամբ վարակիչ նիւթեր կան, որոնց պատճառով կնդակների վրայի բաց վերքերը զփուարութեամբ են առողջանում: Փռուածքի մէջ կարող են ընկնել ամենայն տեսակ սունկեր, որոնք մտնելով կնդակ-

ների վերքերի մէջ, բորբոքում են առաջացնում: Բաւարիայի Ելլինգին քաղաքում Փ. Կեօնիգը դաբաղով հիւանդ կենդանիների համար կաշեայ մի տեսակ մաշիկ է հնարել: Մաշիկն ամուր նստում է կենդանու ոտքին, նրա արեան կանոնաւոր շրջանառութիւնը չի խանգարում և հեշտութեամբ կարելի է հագցնել ու հանել: Կեօնիգը յանախակի ծանր դէպքերում անգամ այս փորձն արել է իր անասունների վրայ. նա նոյն իսկ կնդակի ուրիշ հիւանդութիւնների ժամանակ այս միջոցն է գործադրել և միշտ արդիւնաւոր հետեանքների է հաւել: Նոյն միջոցը գործադրել են նաև ուրիշները և շատ զոհ են մնացել: Այս մաշիկը հագցնելուն պէս կենդանու ոտի ցաւերը հանդարտւում են և վերքերն արագութեամբ սկսում են լաւանալ: Միայն շատ ծանր դէպքերում անհրաժեշտ կլինի ամենայն չր մաշիկներ փոխել և վերքերի վրայ դնել ուռի-տական բամբակ (салициловая вата): Բամբակը նարկաւոր է փոխել 2—3 օրը մի անգամ: Եթէ յաստիկ բորբոքումը անցել է, դարձեալ մի քանի շաբաթ մաշիկը թողնում են կնդակի վրայ: Եթէ հիւանդութեան հէնց սկզբներում մաշիկը հագցրած է, այնուհետև զփուար թէ թարախակալումներ առաջ գան: Շատ օգտակար է այդ միևնոյն մաշիկը հագցնել ձիերի կնդակի մի ուրիշ հիւանդութեան ժամանակ: Եթէ շրջակայքում արշէն երևացել է դաբաղ հիւանդութիւնը, հարկաւոր է պայտարի ձեռքով կնդակի ձեւը հնար եղածին չափ կանոնաւորել, որպէսզի վարակիչ հի-

ւանդութիւնը երեւոյն պէս անմիջապէս հնար լինի գործադրել: Մաշիկները պատրաստում են չորս մեծութեամբ և շատ ամուր են լինում, կարելի է մի քանի անգամ գործ դնել: Գերմանիայում Կեօնիգի հնարած մաշիկը հաւանութիւն է գտած կառավարութեան կողմից, այդ պատճառով էլ թոյլ է տրուած գործածելու: Ձեռք բերելու համար պէտք է դիմել Վիւրցբուրգ, Էդուարդ Կեօնիգին: Գները տարբեր են՝ 1 ու 40 կ. մինչև 2 բուբլի: Եթէ Կեօնիգի այս մաշիկից մի օրինակ ձեռք բերուի, չետոյ նրա օրինակով կարելի կլինի պատրաստել:

Դաբադ հիւանդութեան դէմ բոլոր առաջ բերած միջոցները որքան էլ դժուարին լինեն, այնուամենայնիւ պէտք է գործադրել իւրաքանչիւր հիւանդ կենդանու վրայ առանձին: Այդ միջոցներից օրինակ իւրաքանչիւր հիւանդ կենդանու իւրաքանչիւր կնդակի լուսնալը կամ որևէ դեղ քսելը ոչ միայն դժուար, այլ նոյն իսկ շատ դէպքերում բոլորովին անիրագործելի մի բան է համարուած, մանաւանդ երբ բժշկելու այդ միջոցը գործադրւում է փոքր անասունների և առաւելապէս խոզերի վրայ, որոնց դժուար է բռնել և բժշկութեան ենթարկել, առաւելապէս ամառնային աշխատութեանց միջոցին, երբ անասնատէրերից, զիւղացիներից շատերը դաշտային գործերով են զբաղուած: Ահա այս պատճառով դաբադով հիւանդ անասունների բժշկութեան ամենախելացի միջոցը համարւում է այն, երբ կարելի է լինում միաժամանակ

և առանց դժուարութիւնների մի քանի անասուններ բժշկել: Այսպիսի դէպքում այնտեղ, որտեղ լինում են շատ հիւանդութիւններ, հեշտ և վերին ստիճանի օգտակար է համարւում յարմարաւոր աւազաններ հիմնելը, որով հեշտութեամբ և շատ շուտով կարելի կլինի ազատուել այդ կորստաբեր հիւանդութիւնից: Ահա այս նպատակով պէտք է շինել քաղաքից կամ գիւղից դուրս, գետակի մօտ և կամ մի այլ յարմարաւոր տեղում մի մեծ աւաւան, որ 6—8 վերշոկ խորութիւն ունենայ. մեծութիւնը, այսինքն երկարութիւնը և լայնութիւնը խառնմն ունի այն բանից, թէ արդեօք քանի՞ անասունի համար է պատրաստւում: Այսպէս օրինակ, կարելի է պատրաստել այնպիսի աւազան, որ միանգամից մէջը կարողանան տեղաւորել 100 չլուխ անասուն, կարելի է և այնպէս անել, որ իրկու անգամ աւելի փոքր լինի և այլն: Աւազանը շինենում է մի մուտք և մի ելք, որ շինում են հետեւեալ կերպով. գետակից, լճակից, աղբիւրից կամ ջրհորից ոչ հեռու մի հարթ տեղում պէտք է փորել 6—8 վերշոկ խորութեամբ և 8—10 քառ. սոսժէն տարածութեամբ մի հարթ փոս, որի յատակը և պատերը ամուր տախտակում են *) և այդպիսով կազմում մի մեծ փայտեայ արկղ, որի եզրերը հողի մակերևոյթից քիչ աւելի բարձր են

*) Փոսի յատակը կարելի է պատրաստել նաև աղիւսից ցեմենտի լցուածքով, իսկ պատերը տախտակով և կամ նոյնպէս աղիւսով:

մնում, որպէս զի մէջը փոշի, աւազ և անձրեւի ժամանակ անմաքուր ջուր չթափուի: Այս կերպ պատրաստած աւազանը պէտք է ցանկապատել, միայն առջևից և ետևից մուտքի և ելքի համար ծագարած և բացուածքներ պէտք է ունենան, որպէս զի իւրաքանչիւր կողմից հարկաւոր եղած դէպքում անասունները կարողանան ազատ մտնել և դուրս գալ: Այդ աւազանը լցնում են մինչև 4 վերշոկ բարձրութեամբ համապատասխան բուժիչ հեղուկով (օրինակ շիպի, երկաթի կամ պղնձի, արջասպի, բորակի լուծուածք և այլն) և նրա միջով ամենայն օր 2—3 անգամ պէտք է անցկացնել ամբողջ հօտը: Որպէս զի անասունը մի առ ժամանակ աւազանի մէջ մնայ և աւազանի հեղուկը կարողանայ աւելի երկար ժամանակ ազդել կնճակի վրայ, ելքի մօտ պէտք է մի մարդ կանգնած լինի, որ չթողնէ անասուններին շուտով դուրս գալու, կենդանին պէտք է մօտաւորապէս 5—10 րոպէ մնայ աւազանի մէջ, որ ջուրը կարողանայ իր բարերար ազդեցութիւնն ունենալ: Անասուններին պէտք է հերթով ներս թողնել և նոյնպիսի հերթով էլ դուրս բերել: Կարող է պատահել, որ կենդանիներից մի քանիսը աւազանի միջի հեղուկից սկսեն խմել, դրանից ոչ միայն վնաս չէ պատահում, այլ բնդհակառակը, շատ զգալի օգուտներ է ստացւում, որովհետև շատ կենդանիներ առնելով հեղուկը իրենց բերանը, նրա անհաճոյ համի պատճառով նորից դուրս են թափում, և այդպիսով ողողում իրենց բերանը: Եթէ նոյն իսկ անասունը

մի քիչ էլ կուլ տուած լինի այդ հեղուկից, դարձեալ օգտակար է, որովհետև այդ հեղուկը բարերար ազդեցութիւն կունենայ ստամոքսի և աղիքների վնասուած մաղասամաշկի վրայ, եթէ միայն կայ հիւանդութիւնը: Որպէս զի հեղուկից անասունները չխմեն, նրանց նախօրօք պէտք է ջուր տալ կամ աւազանները դետակի կամ լճակի մօտ շինել և այդ ունի այն նշանակութիւնը, որ սկզբում անասուններն անցնելով նրանց մօտով՝ չաղեցնում են իրենց ծարաւը և յետոյ նոր մտնում աւազան ու այդպիսով չեն խմում բուժիչ հեղուկը:

Աւազանի դետակին կամ լճին մօտ լինելը ունի նաև այն առաւելութիւնը, որ անասուններին առաջուց այնտեղ լուանում, մաքրում են իրենց անմաքուր ոտները և ապա մաքուր ոտներով մրտնում աւազանը, այնպէս որ վերջինս հեղուկը անմիջապէս ներդործում է հիւանդ կնճակների, թրրջւած խոցերի, բոսերի վրայ: Միև չարմարութիւնն ևս այն է, որ հեշտութեամբ կարելի կլինի ձեռք բերել աւազանի համար հարկաւոր քանակութեամբ ջուր:

Մի այսպիսի աւազան շինելը մեծ ծախք չէ պահանջում. փայտէ արկղի ձևով շինած աւազանի համար հարկաւոր է միանգամից 15—20 ուռբ. ծախք և ոչ աւելի, մանաւանդ եթէ գիւղերում այդ բանը զլուխ է բերւում բնդհանուր ուժերով և գիւղացիների—անասնատէրերի ունեցած նիւթերից է պատրաստւում: Այն տեղերում և գիւղերում, որտեղ ազգաբնակչութիւնը դժուարանում է մի այդ-

պիսի աւագան հիմնել, գաւառական վարչութիւնը պէտք է օգնութեան հասնի, որով առաջն առած կլինի աւելի մեծամեծ, բայց միեւնոյն ժամանակ աւելի պակաս օգտակար (առողջապահական-ոստիկանական միջոցների առաջացրած) ծախքերի, մանաւանդ որ այդ միեւնոյն աւագանները ուրիշ անգամ կարող են գործադրուել ոչխարների և այլ անասունների քոս հիւանդութեան ժամանակ վերքերը լուանալու համար:

Ինչ վերաբերում է այն ծախքերին, որ պահանջում է իւրաքանչիւր անգամ աւագանի բուժիչ հեղուկը, այդ մասին պէտք է ասել, որ 10 քառ. սափ. մակերևոյթ և 4 վերշոկ բարձրութիւն ունեցող աւագանի համար բաւական է համարուում 25—30 տակառ կամ 1000—1500 վեդրօ ջուր, որի մէջ պէտք է լուծել 45—50 փութ շիպ (փութը մի ռուբլի է), կամ զաճ (երկաթի արջասպ, փութը 60—80 կոպ.) կամ կապոյտ քար (պղնձի արջասպ, փութը 2 ռուբլի) և այլն: Եթէ քնդունենք, որ աւագանի իւրաքանչիւր անգամուայ հեղուկը շաքար ծի անգամ պէտք է փոխուի, իսկ բացառիկ դէպքերում շաքար ծի նաև երկու անգամ, որովհետև կարող է կեղտոտուել, գոլորշիանալ, փչանալ և այլն, այն ժամանակ, եթէ հիւանդութիւնը 2 շաքար տեէ, աւագանի ջուրը 2—4 անգամ փոխելով, կծախսուի 120—240 ռուբլի: Մի այսպիսի գումար մեծ քանակութեամբ կենդանիներ բժշկելու համար գործադրելը շատ չէ և գաւառական վարչութեան համար նոյն իսկ

խնայողութիւն է, որովհետև հակառակ դէպքում նա ստիպուած կլինի իւրաքանչիւր անասնատիրոջ դեղեր տալ, որ աւելի թանգ կնստի, քան այս դէպքում: Որովհետև պահանջուելիք դեղի լուծւածքը չափազանց ջրալի է, այդ պատճառոր կարելի է աւելացնել արգնահող (ГЛИНОЗЕМЬ) կամ կիր, մինչև որ ստացուի խաշիւանման մի խառնուրդ, որի շնորհիւ դեղը կճղակի և նրա հիւանդ մասերի վրայ աւելի լաւ ազդեցութիւն կունենայ:

Այս եղանակով բժշկելիս անասուններին կարելի է արածելու ուղարկել և ամբողջ հօտը թէ արօտ տանելիս և թէ այնտեղից վերադառնալիս ամենայն օր 4—6 անգամ) պէտք է անցկացնել բուժիչ հեղուկով պատրաստ աւագանի միջով: Որովհետև շատ քիչ անգամ է պատահում, որ գիւղացիները առողջ անասուններին հիւանդներից բաժանեն, բաժանելիս էլ (թէպէտ շատ անգամ նոյն իսկ դժուար իրադործելի է) ամենահասարակ անգղուշութիւնից անգամ կարող են առողջները վարակուել և տարափոխիկ հիւանդութիւն առաջացնել, այդ պատճառով ամենաուղիղ և միեւնոյն ժամանակ ամենահիմնաւոր միջոց համարուում է, առանց հիւանդներին առողջներից ջոկելու, բոլոր կենդանիներին վերոյիշեալ աւագանի մէջ քշելը: Այս դէպքում թէպէտ և առողջ կենդանիներին դժուար կլինի պաշտպանել, ազատ պահել հիւանդութիւնից, բայց նոր հիւանդացողի մէջ կարելի է միշտ հիւանդութիւնը խեղդել հէնց երեւալուն պէս, սկզբներում, այսինքն չթողնել սաստկանալու:

Ի դէպ, եթէ հօտի մէջ առաջացած այս հիւանդութիւնը թեթեւ ընթացք ունի և դեռ մեծամեծ վնասներ չէ առաջացրել, հիւանդութեան առաջն առնելու համար պէտք է առողջ անասուններին պատուաստել և միաժամանակ նրանց ենթարկել բժշկութեան, օրինակ բոլոր անասուններին ենթարկել վերոյիշեալ եղանակով աւազանների մէջ բժշկելուն:

Իսկապէս հիւանդութեան դէմ կռուելու ամենաարդիւնաւոր միջոցը կենդանիների պատուաստումն է, որը շատ հեշտութեամբ կարելի է զուլս բերել: Հիւանդութիւնը երեւոյուն հարկաւոր է վեր առնել մի մաքուր շորի կտոր կամ աւելի լաւ սպունգ և հիւանդ կենդանու բերանի մէջ թուքով թրջելուց յետոյ իսկոյն այդ շորի կտորը կամ սպունգը քսել բոլոր անասունների լեզուին, լընդերքներին և շրթունքներին: Կարելի է նաեւ այս նպատակով վեր առնել մի փունջ լաւ խոտ, կոխել հիւանդ կենդանու թքոտ բերանը և դուրս հանել ու յետ ներս տանել առողջ կենդանիների բերանը: Երկու երեք օրից յետոյ պատուաստած կենդանիների վրայ երեւան կգան վարակուելու նշաններ և թէպէտ հիւանդութիւնը բաւական արագ ընթացք կունենայ, բայց չպէտք է վախենալ, որովհետեւ թեթեւ կանցնի և հիւանդը շուտով (մի երկու օրից յետոյ) կառողջանայ: Պատուաստումը բացի թեթեւ և կարճ միջոցով հիւանդութիւն պատճառելուց, այն մեծ նշանակութիւնն ևս ունի, որ կաթնատու կենդանիների կաթը համարեալ թէ չի

պակասում և իրանք էլ չեն նիհարում. բացի սրանից, պատուաստելուց յետոյ հիւանդութիւնը կարճ միջոցում, մէկ կամ երկու շաբաթուայ ընթացքում, բոլորովին վերջանում է և անասունների ոտքերը ազատ են մնում վարակուելուց:

Հիւանդ անասուններին արածացնելու տանելիս չպէտք է արագ քշել և անհրաժեշտ է տալ միայն փափուկ խոտ: Եթէ հիւանդ անասունների ոտները շատ վնասուած են, պէտք է տանը լժողնել և այնտեղ ձեռք առնել պարտ ու պատշաճ բժշկութիւնը: Եթէ հիւանդ անասուններից ոմանց կնդակի ամբողջ եղջիւրեայ մաշիկը ընկնի — իսկ այդ երեւոյթը խոզերի և ոչխարների համար այնքան էլ վտանգաւոր չէ — հարկաւոր է քաղցրիտ (գլիցերին) քսել կամ հալուէի (алой) ու զմուռսի (миры) հաւասարաչափ խառնուրդը: Տարիքաւոր կովերի և ձիերի կնդակն ընկած դէպքում բժշկութիւնը շատ անգամ անօգուտ է անցնում, մանաւանդ եթէ յօդերն և ոսկրները վնասուած են. այսպիսի դէպքերում աւելի լաւ է մօրթել և միտն ու միւս նիւթերը հէնց նոյն տեղում դորժ ածել: Եթէ հիւանդութեան ժամանակ ամրութիւն պատահի, պէտք է լուծողական տալ՝ զլաուբերեան աղ (глауберова сила), գերչակի (касторовое масло), կտաւասի կամ որեւէ այլ ձէթ (մի անգամ ընդունելու համար կովին և եղանք պէտք է տալ 1 գրվ. ձէթ կամ 1½ գրվ. զլաուբերեան կամ անգլիական աղ՝ լուծած երկու շիշ ջրի մէջ): Յամառ ամրութեան դէպքում պէտք է երկրորդ անգամ

տալ: Լուծի դէմ, որ յաճախ պատահում է մատաղ կենդանիներին, գործ ածել պէտք է կապող եփնաշուր (вяжущий отваръ), ինչպէս օրինակ ջրում խաշած կաղնու կեղևի եփնաշուր (отваръ дубовой коры), կամ շալի՝ 2—3% լուծուածքը կամ աղաղ (танинъ:) Խոզերին պէտք է բժշկել փսխեցնող միջոցներ գործածելով և հիւանդութեան ժամանակ առաջուց լաւ եփած թթու կաթով կերակրել:

Սրովհետեւ խիստ վարակիչ է այս հիւանդութիւնը, որով կարող են հիւանդանալ ամբողջ հօտեր, այդ պատճառով ամեն մի մարդ, որ անասնաբուժութեան մասին տարրական գաղափար անգամ չունի, լաւ կանէ, եթէ միայն այդ հնարաւոր է, հիւանդութեան ծանր հանգամանքներում, օրինակ երբ կնդակներին մէջ ճեղքուածքներ կան և թարախը ծածկաբար է հաւաքուում և ալլն, դիմէ մասնազէտ անասնաբուժի օգնութեան:

1885 թ. Եւրոպական Ռուսաստանի 19, Կովկասի 5 և Ասիական Ռուսաստանի 6 նահանգներում դաբաղով հիւանդացել է 73,496 գլուխ անասուն: Այդքանից մեռել են 1,173 գլուխ մեծ և փոքր եղջիւրաւոր անասուն, որ կազմում է 1,5% մահացութիւն:

1886 թ. Եւրոպական Ռուսաստանի 41 նահանգներում, Կովկասի 6 նահանգներում և Ասիական Ռուսաստանի 5 նահանգներում, ընդամենը կախարութեան 52 նահանգներում հիւանդացել են

դաբաղով 214,468 գլուխ մեծ և փոքր եղջիւրաւոր անասուն: Այդ թուից մեռան 4,355 գլուխ մեծ և փոքր եղջիւրաւոր անասուն, այսինքն մահացութեան 2%:

1887 թ. Կախարութեան 52 նահանգներում դաբաղով հիւանդացել են 175,040 գլուխ, որոնցից մեռել է 1,498 գլուխ մեծ և փոքր եղջիւրաւոր անասուն, այսինքն մահացութեան 0,8%:

1888 թ. դաբաղ հիւանդութիւնը երեւացել է Եւրոպական Ռուսաստանի 50, Կովկասի 4 և Ասիական Ռուսաստանի 3 նահանգներում. Կախարութեան այդ 57 նահանգներում հիւանդացել են 415,059 գլուխ անասուն, որոնցից մեռել են 2,193 գլուխ միայն. մեծ եղջիւրաւոր անասուն հիւանդացել է 326,258 գլուխ և մեռել է 1,450, այսինքն ամբողջի 0,4%, հիւանդացել է 82,038 ոչ խար և մեռել է 514 գլուխ կամ 0,6%, հիւանդացել է 6,763 գլուխ խոզ և մեռել է նրանցից 229 գլուխ կամ 3,3%: Միևնոյն տարում խոզերի հիւանդութիւնը եղջիւրաւոր անասունների հիւանդութեան հետ միասին է երևան եկել:

Ինչ վերաբերում է վերջին տարիներում տեղի ունեցած դաբաղ հիւանդութեան, այդ մասին դեռ չի հրատարակուած և ոչ մի տեղեկութիւն, միայն այսքանն է յայտնի, որ դաբաղը բաւականին ընդարձակ ծաւալ էր ստացել Ռուսաստանում, որը և ստիպեց ներքին Գործերի նախարարութեանը ի միջի ալլոց հետեւալ միջոցները ձեռք առնել:

1. Նահանգապետները պէտք է պարտաւորեցնեն անասնատէրերին, որ վերջիններս դաբաղ հիւանդութիւնը երեւալուն պէս հաղորդեն այդ մասին ոստիկանութեանը:

2. Ստացած տեղեկութիւններն անմիջապէս պէտք է հաղորդել տեղական անասնաբուժին, որն այդ հիւանդութիւնը քննելով տեղական ոստիկանութեան հետ միասին, միջոցներ ձեռք կառնի առանձնացնել վարակուած հօտը:

3. Առանձնացրած հօտը կամ անասունների խումբը պէտք է նոյն տեղում թողնել, մինչև որ հիւանդութիւնը բոլորովին դադարի. նրանց այդ վիճակից ազատել և հիւանդ տեղ տանել կարելի է միայն հօտի մէջ տեղի ունեցած հիւանդութեան վերջին դէպքից երկու շաբաթ անցնելուց յետոյ:

4. Որպէսզի հիւանդութիւնը շուտով դադարի, անասնատիրոջ թոյլատուութեամբ պէտք է հիւանդութիւն երեցած հօտի ոչ հիւանդ անասուններին պատուաստել: Նոյն կերպ կարելի է անել նաև տեղական միւս հօտերի հետ:

Այն դէպքում, երբ այս ու այն կողմ տարւող, այս երկրից այն երկիրը շրջող հօտի անասունները ենթարկուած են պատուաստման, բոլորի առողջանալուց մի շաբաթ յետոյ միայն կարելի է թոյլ տալ շարունակելու իրենց ճանապարհը: Այս բոլոր միջոցները Ռուսաստանում ղեռ ամեն տեղ չեն զործադրուած և բացի դրանից դրանք վերաբերում են միայն մեծ եղջիւրաւոր անասունների և ոչխարների մէջ եղած դաբաղ հիւանդութեան:

Ինչ վերաբերում է խոզերի դաբաղ հիւանդութեան, պէտք է ասել, որ ղեռ ոչ մի միջոց չի զործադրուած, եթէ միայն հաշուի չառնենք արտասահման տանելու համար վերջերս ընդհանուր առողջապահական-ոստիկանական միջոցների մասին եղած կարգադրութիւնը:

Թէև այդ հիւանդութեան դէմ Ռուսաստանում ոստիկանական-անասնաբուժական միջոցներ ղեռ չեն հրատարակուած, բայց շատ կարևոր է զործադրել հետեւեալ կանոնները.

1. Անպայման պէտք է արգելել, որ հարեւան վարակուած տեղերից անասուններ և նրանցից ստացուած ուտելիքներ չներմուծեն ուրիշ հիւանդութիւնից ազատ տեղեր:

2. Պէտք է արգելել վարակուած տեղերից աղբ, խոտ, դարման և չորացրած կաշի դուրս տանել: Այս հիւանդութեամբ մեռած կենդանիների կաշին քերթելուց յետոյ անմիջապէս պէտք է ամենայն զգուշութեամբ ախտահանել և ապա բոլորորին չորացնելուց յետոյ միայն կարելի կլինի ծախել:

3. Չպէտք է երբեք բաղմամարդ տեղերում և ճանապարհների վրայ կամ նրանց մօտակայքում աղբ և ուրիշ անմաքրութիւններ թափել. այդ բոլոր կենդանիների ղիակների հետ միասին ընդհանուր անասնաբուժական-առողջապահական կանոնների համաձայն պէտք է ոչնչացնել:

4. չէնց որ դաբաղը սկսեց մեծ ծաւալ ստանալ, հարկաւոր է իսկոյն վարակուած տեղերը կարանտինով շրջապատել և սահմանների վրայ նա-

խաղաղուշացուցիչ տախտակներ տնկել և վրան զրել «դաբաղ», իսկ հարեան տեղերում ձեռք առնել բոլոր նախաղաղուշացուցիչ միջոցները:

5. Մսավաճառներին, անասնավաճառներին և կաշածախսներին չպէտք է թույլ տալ ներս մտնելու հիւանդութիւն եղած տեղերը:

6. Վարակուած տեղերի հօտերը չպէտք է թույլ տալ, որ անցնեն առողջ տեղերով. այսպիսիները նախ պէտք է ենթարկուեն 15 օրեայ կարանտինի, եթէ միայն նրանք շատ շուտով չպէտք է մորթուին:

7. Դաբաղը դադարած պէտք է համարել միայն այն ժամանակ, երբ վերջին 14 օրուայ ընթացքում միևնոյն տեղում հիւանդութեան ոչ մի նոր դէպք տեղի չէ ունեցել:

8. Այս վարակիչ հիւանդութիւնը դադարելուց յետոյ պէտք է հիւանդ կենդանիներ ունեցող գոմերը և նոցա հետ շփումն ունեցող կառքերն ու զործիքները լաւ մաքրել և ախտահանել: Փակ տեղերում բացի ախտահանող հեղուկ միջոցներ գործ դնելուց, անհրաժեշտ է նաև ծուխ տալ:

9. Լաւ կլինի դաբաղ հիւանդութեան ժամանակ ամբողջ Ռուսաստանում մտցնել անասունների պարտաւորեցուցիչ ապահովագրութիւն:

ԲԺ. Ա. ԲՈՒԳՈՒԳԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Առաջին օգնութիւն մինչև բժշկի գալը (սպառ.)	5 կ.
2. Վարակիչ հիւանդութիւններ	5 »
3. Խնչ է սիֆիլիսը	5 »
4. Առողջապահական զրոյցներ	5 »
5. Խնչ է ժուժկալութիւնը	5 »
6. Խնչ է անառակութիւնը	5 »
7. Վեներական ախտեր	5 »
8. Աշակերտի առողջապահութիւն	2 »
9. Մեր նեարդերը	10 »
10. Սիֆիլիս (բարեփոխուած)	10 »
11. Առողջ հոգին առողջ մարմնի մէջ	10 »
12. Գեղձախտ (զլօտուխտ)	10 »
13. Ո՞վ է յանցաւորը	15 »
14. Կարիք և բարեգործութիւն	15 »
15. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն	15 »
16. Մանկավարժական համառօտ զրոյցներ	15 »
17. Մարմնամարզութիւն (25 պատկերով)	20 »
18. Առողջապահական նուէր նորատի կանանց	20 »
19. Կինը և տղամարդը	15 »
20. Վիրաբուժական հիւանդութիւն և օպերացիա	5 »
21. Խնչ է կաշու հիւանդութիւնը	15 »
22. Երիտասարդութիւն և ծերութիւն	15 »
23. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին	20 »
24. Ուղեղի սիֆիլիսը (գլխի և ողնաշարի)	20 »
25. Ստամոքսի կատարը	20 »



26. Քուն և երազ (մի պատկերով)	25	կ.
Մեծադիր պատկեր «Քուն և երազ» առանձին	10	»
27. Գործարան թէ երկրագործութիւն.	15	»
28. Սնապաշտութիւն ու կախարդութիւն	20	»
29. Մտերմական խորհրդ. պատանիներին (օնանիւմ)	20	»
30. Գոյութեան կռիւ	20	»
31. Ռուզժլիք Վերիսով	25	»
32. Սէր և խանդ (մի պատկերով)	20	»
33. Անառակութիւն և պոռնկութիւն	20	»
34. Նուէր հայ զինւորին	20	»
35. Նուէր հայ վարժապետին (զպրոցական առող- ջապահութիւն):	20	»
36. Նուէր հայ զպրոցականին (Մեր օրերը)	10	»
37. Ութժամնայ բանուորական օր (մի պատկ.)	10	»
38. Ժողովրդական առողջապահութիւն (հիւանդա- ցում և մահացութիւն)	10	»
39. Երկու խօսք զիւզացուն	10	»
40. Սով (մամուլի տակ է)	10	»

Պահեստը գտնուում է՝ Ս.-Պետերբուրգ, «Պուշկինեան Երազատիպ»,
Լեշտուկով փող. տ. 4



Գինն է 10 հոգ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0267844

7491